

Տարեկան գինը 10 ռուբլ կէս տարվանը 6 ռուբլ:

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ:

Օտարաբարբաղիք գիմում են ուղղակի
Тифлис. Редакция „Миръ“

ՄԵԼԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տոն օրերէն):

Հայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Հայտարարութիւնների համար վճարում են
խրաբանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մի հաստատ կրթողական միջոց:—Ն երբին
տեսնուի: Նա մակ Դարաշէկագից: Նամակ
խմբագրին: Ներքին լուրեր:—Արտաքին տե-
սուի իւր: Խաղա:—Խաղա լուրեր:—
Յայտարարութիւններ:—Տեղեկացոյց:—Բանասի-
րակաւ: Ոսկի արդար:

ՄԻ ՀԱՍՏԱՏ ԿՐԹՈՂԱԿԱՆ ՄԻՋՈՑ

Փորձ փորձեցէք, ընթերցող
վեր առէք մի անկիրթ մարդուն
և տարէք նրան մի մուգեղում, նը-
կարչութիւնների մի թանգարան,
որտեղ կան ամեն ազգերի ամե-
նաբերեկ նկարիչների ստեղծ-
ուածները, աշխատեցէք բացա-
տրել նրան որ սա է հօլանդական
նկարչութեան դպրոցը, միւսը ի-
տալական, երրորդը ֆրանսիական,
չորրորդը գերմանական և այլն.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՈՍԿԻ ԱՔԱՂԱՂ (Առաջին մաս)

Ե... քաղաքի մի յետ ընկած փողոցում գտան-
վում էր մի յարկանի տուն. որ քողովում էր ընդ
տներից իր մաշված պատերով, ցած դրնով և նեղ
լուսամուտներով, որոնց նմանը կարելի է տեսնել
միայն բանտերի մէջ: Երևի, նա չլինում է եղել
այն դարերում, երբ դեռ եւրոպական ճարտարու-
թիւնը մուտք չէր գործել այդ քաղաքում. և այժմ
հարկան տները բոլորը փոխել էին իրանց կեր-
պարանքը, իսկ նա մնացել էր իր պարսկական հին
ձևի մէջ: Նիզ դուռը ներս էր տանում մի բուռ-
կան ընդարձակ բակ, որը հովանաւորված էր չա-
րկեր թիթեղներով, որոնց միջով բոլորովին փափկ
և դուրս էր թափվել իսկ ծառերը իրանց պատու-
ված փորով ստացել էին հրէշաւոր կերպարանք:
Նրանց հետ խառն, այստեղ ու այնտեղ, անխնայ
կերպով, տնկված էին մի քանի ընկուզենիներ,
ծերացած ուռիներ և կիսաչոր ծիրաններ: Խաղողի
որթը, փաթաթվելով այս գոտեցած ծառերի բուռ-
նի, և վեր բարձրանալով մինչև նրանց կատարը,
իր աղաղթախիտ ոտներով թափգրել էր նրանց
մերկութիւնը, զարդարելով իր գեղեցիկ կանաչու-
թեամբ: Չը նայելով, որ այս ծառատունկը մարդ-
կային բնակութեան մէջ էր գտնվում, բայց կար-
ծես, աղանդիւր ձևով նրանց բնաւ չէր դիպել,
և ամեն ինչ բուռն: Ծանր, մեծացել էր իր վայրե-
նի համարձակութեան մէջ:

Բակի զանազան կողմերում, նոյնպէս անկանոն
կերպով, գտնվում էին, գետնից հալիւ բարձրա-
ցած, մի քանի ծածկոյններ, հնացած, ծխի մէջ սե-
ւացած, և ժամանակից քայքայված շինուածքով,
որոնք իրանց ողորմելի կերպարանքով լրացնում
էին ընդհանուր պատկերը: Երկու թիւեր:—Առա-
սարակ այդ տունը այն տապալուրթիւն էր գոր-
ծում, որպէս թէ, նրա մէջ բնակվում էր այն ի-

աշխատեցէք բացատրել նրան ի-
րաբանչիւր պատկերի իմաստը,
ցոյց տուեցէք նկարչութեան նուրբ
կողմերը, նրա գեղարուեստական,
կրթողական նշանակութիւնը, և
այնու ամենայնիւ կարող էք հա-
ւատացած ընել որ անկիրթ մարդ
բերանը բաց կը լսի ձեզ, առանց
ձեր խօսքերից և ոչ մէկը հասկա-
նալու, առանց կարողութիւն ու-
նենալու ճաշակել և վայելել նկար-
չութիւնների գեղարուեստական
նշանակութիւնը, առանց հասկա-
նալու մեծ վարպետների ստեղ-
ծուածների գեղեցկութիւնը, որոնց
մէջ ազգերի հանձարը գրել է իր
ամենաբարձր զգացմունքները, իր
սրտի ամենախոր զգացմունքները,
որոնցով մի Բաֆայէլ, մի Բեմբ-
րանտ, մի Կաուլբախ, մի Տիտիէն
իրանց անմահացրել են:

Բայց տարէք նոյն անկիրթ

զինդային ողբերից մէկը, որ ինքնահաճ յամառու-
թեամբ չէ ներում ոչինչ նորոգութիւն, որ սիրում
է անշարժ աւերակներ, որ տիրում է փռութիւնը
մշտական փլատակների վրա...

Այդ տան մէջ բնակվում էր քաղաքի ամենահա-
րուստ մարդը, որին բոլոր զաւառում էաղաք էին
հոչում:—Այդ տան մէջ բնակվում էր Պետրոս
Մասիսեանը, որի հետ ընթերցողը ծանօթացաւ
նախնեաց գլուխներում:

Մասիսեանի անհոգութիւնը իր տան վերանորո-
գութեան փորձերով թեմով չէր առաջ գալիս փը-
լատութիւնից. իսկապէս, նա ժառ մարդ չէր,—
այլ մի նախապաշարմունքից, որ նրա համար ա-
ւանդական էր դարձել: Նրա կարծիքով ամեն մի
տուն ունէր իր խորհրդական ներդրութիւնը բը-
նակիչների վրա, այսինքն, տան գերբնա-
կան յատկութիւնից էր կախված նրանց թէ բախ-
տաւորութիւնը և թէ անբախտութիւնը: Կան տը-
ներ, որոնց մէջ բնակիչների զաւակները մեռնում
են, տները չառ չեն ապրում, չբաւորութիւնը
միշտ կապված է լինում այն տան ճակատագրի
հետ, և եթէ հարուստ մէկը բնակվելու լինի այն-
տեղ, չուտով կաղքատանայ: Եւ ընդհակառակն,
կան տներ, որ բարի ազդեցութիւն ունեն: Մասի-
սեանի տունը վերջին տեսակներից էր: Այսպիսի
տների բախտը կապված է լինում մի անհրաժեշտ
էակի կենսի հետ. ըստ մեծի մասին նա լինում
է մի օձ, որ զլինի գոհարեղէն պտակ ունէր, և
հագել անպատճառ էր երևում: Բայց Մասիսեանի
տան բախտը մի օտակի քաղաք էր իր ոսկի հա-
ւի հետ, որոնք չառ անպատճառ երևեցել էին նրա պա-
պերին իրանց ոսկի ձուկերով: Այդ մասին Մասի-
սեանի ընտանիքը մէջ մնացել էր առանցքական
աւանդութիւնների մի ամբողջ շարք, որ անցել էր
սերունդից սերունդ:

Մասիսեանի հօր ժամանակ օտակի քաղաքը
անյայտացաւ և այս պատճառով նրա օրինակը քը-
նեց, նա աղքատացաւ. իսկ իր օրերում կրկին նա
սկսեց գործ դնել իր բարեբար ազդեցութիւնը:
Պակի քաղաքը կրկին յայտնվելով, կրկին նրա
օձախի բախտը փոխվեցաւ դէպի բարին:—
տունը վրա եկաւ նրան,— և դրա համար, այս
տան ամեն մի քաղաք, ամեն մի մաշված աղւաթ,
ամեն մի կտոր փրփած փայտը ստացաւ նրա հա-
մար նուիրական նշանակութիւն, որ պէտք էր պա-
պանել իրանց անփութիւն ձևի մէջ, որ պէտք էր
անշարժ թողնել, չլիք թէ խանդավառ տան խոր-
հրդական գաղտնիք:

մարդուն հրապարակը և ցոյց
տուեցէք նրան փողոցի պատերի
վրա կախած կոշտ, կոպիտ, անշ-
նորհ, աններդաշնակ և վառ գոյ-
ներով ներկած, գուցէ անբարոյա-
կան պատկերները, և ամբողջի
մարդը հիացած կը մնայ... Այդ
տեսակ անճոռնի պատկերները
նրա համար հասկանալի են, այն
ինչ, մի ժամ առաջ նա անտար-
բեր էր մնում մարդկութեան ա-
մենաբերեկ, անմահ նկարչական
ստեղծուածների առջև...

Նոյնը կրկնվում է և երաշժ-
տութեան, և մոքերի, և թատ-
րոնական արհեստի վերաբերու-
թեամբ:

Փորձեցէք անկիրթ ժողովրդի
առջև մի ամենաբերեկ կրօնիկա-
յին հեղինակի պիէսա, մի Շի-
լերի, Հէկայի կամ Գեթեի
գրուածք ներկայացնել կամ մի

Մասիսեանը այն տեսակ հարուստներից էր, որ
մեր մէջ սովորաբար կոչվում են պարսկական բա-
ռուղի ծովափայտ, այսինքն նոր քանի տէր, որ
նշանակում է՝ աղքատութիւնից բարձրացած և
փողի տէր դարձած մարդ: Այս տեսակ հարուստ-
ները զանազանվում են ժառանգական դրամատե-
րից մի քանի յատկութիւններով: Դրանք, իբրև
ճշտեմտեք, ամեն արժանաւորութիւն, ամեն կա-
տարելութիւն արժաթի մէջ են գտնում: Դրանք
երևակայում են, թէ խելք, դիտելիւն, աղւաթ-
թիւն, պատիւ, մի խօսքով, ամեն բան ունեն, ո-
րովհետև փող ունեն, և սիրում են այս վերջինը
խրաբանչիւր դէպքում երևան հանել, աչքի ձգել:
Դրանք մի տեսակ հրէշներ են, որ իրանց այ-
լանդակութիւնը ծածկում են ոսկի զինակով:

Բայց Մասիսեանը յիշեալ տեսակներից էր: Նա
իր հարստութեամբ ոչ պարծենում էր և ոչ հպար-
տանում, այլ ընդհակառակն, նա խիստ համեստ
մարդ էր, և աշխատում էր, որքան կարելի
էր, սակաւ ցոյց տալ ժողովրդի աչքին այն,
որքան ինքն ունէր:—Վերստ ինձ է այրում,
գուրդ—ուրիշ:—Վաւերացէք տեսնում, բայց
մէջը դուրսիւն չը կայ:—Վաւ է մարդու աչքը
դուրս գալ, քան թէ անուր:—Այն այսպիսի ա-
ռածներով էր բացատրում նա իր վիճակը:

Մասիսեանը այսպէս էր մտածում փողի վրա:
Ոչ որ չէ պարծենում, ասում էր նա, օրինակ,
այսպիսի հարստութիւններով, որ երկու աչք ունի,
երկու ախանջ ունի, երկու ձեռք ունի և այլն,
որովհետև բոլորովին բնական է համարում: Այն-
պէս էլ պէտք չէ պարծենալ փողի վրա, որովհետև
դա մի կենսական անհրաժեշտութիւն է, առանց
որին, նրա կարծիքով, մարդը ապրել կարող չէր,
և առանց որին պակաս էր մարդու համար մի ա-
մենապակասը գործիչ:

Բայց փող ձեռք բերելու և փող պահպանելու
համար, բացի օտակի քաղաքից, այսինքն, բացի
բախտից, Մասիսեանը ունէր իր յատուկ օրէնք-
ները: Նրա բարոյականութեան, նրա անհոգ
գործունէութեան նշանաբանը բովանդակվում էր
հետեւեալ հայրական առածի մէջ, թէ «Այն առաջ
դ մակ է, իսկ մարդը—դ առաջ», պէտք է
աշխատի այս իւրաքանչեւ պատառից կտրել և ուտել,
եթէ ոչ քաղցած կը մեռնի: Իսկ միջոցների մէջ
նա զանազանութիւն չէր դնում. ամեն միջոց նրա
համար սուրբ էր, երբ հասցնում էր նպատակին:
Եւ այդ բոլոր անուր էր նա թէ փոխադարձ,
ոչ թէ չարամտութեամբ, այլ բոլորովին բնական

խելացի ժամանակակից պիէսա
խաղալ:— և ամբողջ բոլորովին չի
հասկանայ այդ տեսակ պիէսա:

Բայց ներկայացրէք նոյն ժո-
ղովրդի առջև մի անհնորհ, անկապ
կտորներից կարկատած, ընդհա-
նուր միտք չունեցող, գեղարուես-
տական արժանաւորութեանց գուրդ,
բայց բարձրահին բառերով և
զարդուկ ֆրազներով լի մի պիէ-
սա, «Վարդան Մամիկոնեանի»
«Մըշակի» կամ «Մի քաղաքի ա-
ւերման» պէս մի անճոռնի թատ-
րոնական գրուածք, և ամբողջ
հիացած կը մնայ:

Երկու միջոց, երկու ճանապարհ
կայ ամբողջ կրթելու. միւսը՝ փոքր
սա փոքր, և նրա կամքի դէմ,
զարգացնելով նրա մէջ արդար
մոքեր, ճշմարիտ գաղափարներ,
նուրբ գեղարուեստական ճաշակ,
օգտուելու հմտութիւններ, մարդա-

էր համարում, և այս պատճառով նրա խիղճը
միշտ հանգիստ էր:

Մասիսեանը մասկաճառի որդի էր: Նա ման-
կութեան հասակում օգնում էր հօրը իր արհեստ
գործի մէջ: Մասկաճառը և դահլիճը չառ չեն զա-
նազանվում իրանց արհեստով: Մէկը մարդիկ է
մորթում, միւսը՝ անասուններ: Այստեղից Մասի-
սեանը ստացաւ իր բնաւորութեան խառնութիւնը,
որ երբեմն նրա մէջ բարբարոսութեան էր հասնում:
Բայց նրա խառնարանութիւնը աւելի տնային էր և
ընտանեկան: Նա այն տեսակ մարդկներից էր,
որոնց մասին ասում են «տանը աստանայ, դուրսը
քահանայ»: Ընտանեկան չլինում նա բռնակալ
էր, որպէս զաղան, իսկ դուռում—զառն: Նրա
մարդահասութիւնը օտարների հետ համարում էր
մինչև ստորաբար ցածութեան: Նա ունէր սողունի
բոլոր յատկութիւնները: Ոճի պէս դիւրաթիւ էր
և առաձգական էր. դէպի ամեն կողմ զալարվում էր,
ծււլում և ծալվում էր: Եւ նոյնպէս օձի նման
իր թոյնը թափցրած ունէր խաղողի մէջ...

Այսպիսի յատկութիւններով Մասիսեանը նպա-
տակ չուներ ոչ որքան խաբուել, ոչ որքան առջև
կեղծաւորվելու, և ոչ մտածում էր, թէ մեղան-
չում է պատուի դէմ,—այլ համոզված էր, թէ ու-
րիշ կերպ լինել կարելի է, թէ աշխարհը այդ է
պահանջում, և իր վարմունքը արդարացնում էր
այն սովորական խրատով,—եթէ մտնելու լինիս
մի քաղաք և տեսնես, որ մարդիկ միակամ են,
դու էլ աչքերիցդ մէկը դուրս հան, որ նրանց
նմանես:—«Վարժ (գիրաբեկ) ամառը չուտով է
կոտորվում», ասում էր նա, պէտք է փախուկ
լինել, ձկուռ լինել, պէտք է ամեն կողմ ծալվել,
որ կարելի լինի պահպանել իր ամբողջութիւնը:
Մասիսեանի մէջ մտացածին, կեղծ, ոչինչ չը
կար: Ամեն ինչ բղրում էր նրա մէջ հաստատ
համոզմունքից: Նա հետևում էր իրերի և կենսի
պահանջների ընթացքին, և եթէ այդ ընթացքը
ձգել էր նրան ծուռ ճանապարհի վրա, նա մտա-
ւոր չէր, այլ մեղաւոր էր այն հոսանքը, որ
նրան իր հետ հետ էր տանում...

Մասիսեանը իր ասպարէզը սկսեց զօղարու-
թիւնով, այսինքն, թողնելով հօր արհեստը, մաս-
կաճառութիւնը, սկսեց այնուհետև եղբիւրաւոր
անասուններ դնել գլուխից, և բերել քաղաքը,
ծախել մասկաճառներին: Դա մի տեսակ գերե-
վաճառութիւն է: Ով որ ճանաչում է «զօղարի»
—անասնաբանութիւն,—նա մեղ հետ կը համա-
ձայնի, որ չօղարը բնաւորութեամբ չառ չէ

սիրական բարձր զգացմունք այդ բառի լայն նշանակութեամբ, երկրորդը՝ երբեք չը հակառակելով ամբողջին, տարով նրան այն, ինչ որ ինքն է ցանկանում և հասկանում է, շողորթութեամբ նրա ամենաանկիրթ, ամենաստոր զգացմունքներին և ինստինկտներին....

Առաջին ճանապարհը ծանր, դժուար, փշոտ ճանապարհ է. դժբախտ հետեւերու համար պէտք է մեծ համբերութիւն ունենալ. բայց նա հաստատ, թէեւ շատ երկար ճանապարհ է: Այդ ճանապարհին հետեւողները ներկայի համար չեն ապրում, այլ ներկայից օգուտ են քաղում ապագայի համար աշխատելով: Սրանք հեռատես մարդիկ են, սրանք ամբողջի ստոր ծառայների, ինստինկտների, զգացմունքների, գաղափարների դէմ են գնում.... Սրանք ապագայում են ծանաչվում, ապագայ սերունդները նրանց շատ անգամ հանձար են անուանում, իսկ ժամանակակիցները նրանք մեծ մասամբ ծաղրած, հայհոյված, հալածված են լինում, իսկ պատահում է որ ժամանակակիցները նրանց սպանում են անգամ....

Երկրորդ ճանապարհը, թէեւ փաստակար է լինում, որովհետեւ

փշացնում է ժողովրդի ճաշակը, լրացնում է նրա զգացմունքները, անբարոյականացնում է նրա գաղափարները, բայց լինում է հեշտ, արդիւնաւոր, պողատու և շահաւետ:

Շողորթութիւն ամբողջին, տուր նրան այն, ինչ որ նա սիրում է, արա ինչ որ նրան հասկանալի, հաճելի և դուր եկան է, փաղաքշիւր նրա ամենախիւր, ամենաստոր զգացմունքներին, — և դու առատ հունձ կը հնձես, ծանաչված և սիրված կը լինես ամբողջից, որովհետեւ հոսանքի դէմ չես գնում....

Արհեստի մէջ ամբողջ սիրում է անձառնութիւն, — տուր նրան անձառնութիւն: Թատրոնի մէջ նա սիրում է դարձակաբանութիւն, փրկած ֆրագներ և անտաշ խաղ, — տուր նրան այն, ինչ որ նա սիրում է: Գրականութեան մէջ նա սիրում է որ շողորթութեն նրա բոլոր նախապաշարմունքներին, անշարժութեան զգացմունքին, — արա այնպէս, ինչպէս ամբողջ պահանջում է:

Ամբողջ սիրում է վառ և աններդաշնակ գոյներով ներկած պատկերներ, — այդպէս էլ նկարեցէք՝ ձեր պատկերները և նրանք մեծ տարածութիւն կունենան:

Ամբողջ հաւանում է անհամ, գեղարուեստական արժանաւորութեան զուրկ պատմական թատրոնական գրուածներ, — խաղացէք այդ տեսակ պիէսներ և ողբան էլ վատ խաղայիք, թատրոն միշտ ինչ կը լինի: Ամբողջ մոլեռանդ է, ֆանատիկոս է, — գրեցէք ձեր յօդուածներում որ կաթօլիկ և բողոքական հայերը իրաւունք չունեն հայ անուն կրելու, որ հայերի այլադասան այդ եղբայրներին պէտք է ամեն միջոցներով հալածել, որ նա է միայն հայը, ով լուսաւորչական է, — և ձեր յօդուածները ու ձեր լրագիրը շատ ընթերցողներ կունենան:

Իսկ հետեւների վրա ինչ հարկաւոր է մտածել:

Դա թէեւ ամբողջ կրթելու հաստատ միջոց չէ, բայց իր գերպանը լցնելու և ժողովրդական մարդ հռչակվելու աւելի հաստատ միջոց է, քան թէ անխնայ կերպով մտրակելով ամբողջ բոլոր պակասութիւնները և ախտերը:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԴԱՐԱՆԻՉԱԳԻՑ

Անցեալ թուականի Դարաշնչագից գրած իմ նամակներս մէկի մէջ, ես յայտնել էի այն միտքը, թէ անհրաժեշտ է հոգեւոր կառավարութեան մի մասնաժողով կազմել որի պարագը լինի հսկել և խնամք տանել հայոց հին ժամանակից մնացած հայոց չէնքերի մնացորդները վրա: Սեր ձայնը ոչ մի տեղ արձագանք չը գտաւ, հետեւապէս հետաքննութիւնները ենթարկված լինելով ժամանակի մաշող ազդեցութեանը, կամաց կամաց չքանուի են մեր աչքից: Զանազան փորձեր և շարժումներ, շատ տեղերում կարելի է տեսնել ամբողջ, աշտարակներ, հողակապ պայտանքի հետքեր, գրեթէ մինչև այսօր կենդանի մնացած վանքեր: Դրանց մէջ առաջինը, անվիւ և աղօթիկ են մեր նախնիքը, իսկ այսօր աշխարհակալ թագաւորների, հռչակաւոր իշխանների բնակարաններում գաղանկներ և թուրքաւոր միջատներն են ապաստանարան գտնուած: Առհասարակ հուսկիւնների մեծ մասը, որոնց թուրքաւոր և Դարաշնչագիցը, Արշակունեաց մարած հարստութեան ժամանակից են: Այդ, այն ժամանակն էր երբ քրիստոնէական կրօնի լապտերը վառվում էր Հայաստանում ամենամաք լուսով: Որ հայի սիրտը չի բարձիւ ինքն տեսնի Բաշ-Գառնուայ Տըրապալ բերդը, թաղը տաքի սրանից առաջ այդ ամբողջին մտնելով կը կարծէր թէ մի մարդանակ քաղաք է մտնում, իսկ այսօր հազար թէ կարելի է կարծել որ այդտեղ անցնել է երեւմէն իւր օրերը մի Արշակունի թագաւոր: Ամբողջ հոգեւոր էր և հայ գիւղացու արօրը, իսկ քանդակագործ քարերը կարելի է տեսնել հայ գիւղացու խոնթի վրա, որպէս մի թանկագին կտոր մի աղքատ մարդու հնոթի հագուստի վրա: Դայեցէք Արտաշատին, հայերի այդ կորած փայլելին: Պատմում են, որ սրանից տասը կամ քսան տարի առաջ գրեթէ կենդանի է եղել այդ քաղաքը պարիսպը, իսկ այսօր այնտեղ հուսկեան հետքեր չեն նշմարվում: Եթէ հայը չը գիտէ յարգել իւր նախնիքներից մնացած սրբազան յիշատակը և նա ինքն է խախտել

վերջին նկատողութիւնը դուր չեկաւ Կաթի ինքնասիրութեանը և նա ասաց.

— Ես եզմ չեմ....

Երկու ամուսինները սուր կերպով նայեցան նրա վրա և ոչինչ չը պատասխանեցին:

Կաթին հրամայեցին տանել խոհանոցը և հաց տալ ուտելու:

— Իհրուհ երկար է երևում... նկատեց Մասիսեանը. — Կոչու-կոչու է մեծացել... չէր վարպետի ապուսակ չի կերել... Բայց լաւ բանուոր է:

— Բանեղ ետալ կը գնայ, պատասխանեց տիկինը. — Աստուած տայ, դոյ չը լինի:

— Հիմա, ի հարկէ, չի լինի, հալալ նոր է ձուլըցը դուրս թուել. կամաց-կամաց կը սորվի, յետոյ կը գողանայ:

— Ես չեմ թողնի, որ սորվի, ասաց տիկինը: Մասիսեանը անհաւան կերպով դուրսը չարժեց և ծիծաղելով ասաց.

— Դու չես թողնի, բայց նա էլի կը սորվի. — շատ բան կայ, որ մինչ արդեւում ենք, բայց մարդիկ սովորում են առանց վարժապետի: Դպրի ձողն ողբան արդեւում, որ գետը չը մտնի, չես կարող, հէնց որ ձուլից դուրս եկաւ, կը վազէ դէպի ջուրը: Ո՞վ սովորացրեց նրան լեղ տալը:

Այս խոսակցութիւնը անց էր կենում բակում, ուր այր և կին նստած էին մի քառակուսի թախտի վրա, որ դրած էր նոր տեղերը բացած ուռնու տակ և ծածկած էր կապեթով: Նրանց որդին, Ստեփանը, ծնունդից փոքր ինչ հեռու, ածուկ մօտ նստած, խոշորացողով գնում էր մի փոքրիկ միջատ: Լսելով հօր վերջին խօսքերը, նա մէջ մտաւ, ասելով.

— Ղազի ձուտը բնադրում ունի, և դրա համար վառում է դէպի ջուրը, բայց մարդը մի այնպիսի բնադրում չունի, որ դրէր նրան դէպի գողութիւն. այդ պատիւն սովորում է նա վատ օրինակից, անկրթութիւնից, և վերջապէս կեանքի ոտիչ պայմաններից:

Հայրը, ի հարկէ, չը հասկացաւ որդու խօսքերը, և մի խոժոռ հայացք ձգելով նրա երեսին, ասաց.

— Դա քո խելքի բան չէ, սուս կնայ....

(Կը շարունակվի)

զանազանում այն մարդիկներից, որ Աֆրիկայի փոքրիկ վրա կատարում են մի ամօթալի առևտուր:

Փոքր ինչ հարստանալով, Մասիսեանը ձեռք առեց ուրիշ զանազան տեսակ առևտրական գործեր, և ամենի մէջ «սոսի քաղաքը» օգնում էր նրան, մինչև նա եղաւ իր գաւառի ամենահարուստ մարդը:

Բայց ստոր ծագումից բարձրացած մարդիկ, որպէս էր Մասիսեանը, միշտ աշխատում են իրանց տոհմային անցիւր մոռանալ տալ և մի կերպով ազնուացնել նրան: Մասիսեանը թէեւ հեռու էր ամեն տեսակ փառասիրութիւնից, բայց այդ ախտից ազատ մնալ չը կարողացաւ: Ինչը դրդեց նրան, յայտնի չէ, միայն ցանկացաւ ունենալ փոքր ինչ փայտուտ տոհմանուն: Եւ դրա համար մի մեծ դժուարութիւն չը կար, բաւական էր միայն նայել հայոց տարեգրութիւնների ցանկին, և այնտեղից ընտրել մի պատմական անուն: Նա ընտրեց Մասիս անունը, որովհետեւ մնացեալ բոլոր անունները բռնված էին:

Իր նախնիքների փառաւոր անունները գողանալ, և հեռու մնալ նրանց առաքինութիւններից, — դա մեր, այժմեան հայերին մէջ, նոր բան չէ: Մենք ունենք այժմ Արշակունիներ, Բագրատունիներ, Մամիկոնեաններ, Ամատունիներ, Պաշլուանիներ, Կամարականներ, — և ինչ պէտք է մի ըստ միջնե թուել, — մեր լեռների, դաշտերի, և գետերի անուններն անգամ միացած են սինթետիկ մարդկանց տոհմանունների հետ, այնպէս որ, եթէ հայոց պատմագիրները նորից աշխարհ գալու լինէին, շատ պիտի դարձնային, տեսնելով, որ մեր բոլոր սպառնական նախաբարական սերունդը կրկին յաւրոթիւն էր առել:

Գ

Մասիսեանի ընտանիքը փոքր էր: Նրա եղած որդիներըց այժմ մնացել էին երկու աղջիկներ և մի տղայ միայն: Նրա առջինիցը, մեծ աղջիկը, մեռաւ մի ցաւալի մահով. նա իրան խելից, պարանոցէն կախ ընկնելով փայտանոցի առաստաղից, Պատմաւոր մի գաղտնիք է, որը երեան հանելով, մենք չենք ուզում միտաբերել անբարոյ գոյի յիշատակը... Մենք փոքր, երկար ժամանակ սպասելով, բաւական պատահելով, երբ նկատեց, որ հայրը իրան մարդու տալու միտք չունի, ծածուկ փախաւ հօր գործակալներից մէկին հետ և գիւղումը պակսվեցաւ: Հայրը անթիւն նրան, բայց չուտով մուսալա, միայն երբեմն մտաբերում էր այս նա-

խառական բառերով. «այն անգամը»... Այն օրից աղջիկը բոլորովին զրկված էր հօր անից. մի քանի անգամ միայն բախտ ունեցաւ ծածուկ մտնել հօր տունը մօրը տեսնելու համար, որին շատ սիրում էր: Որդին, Ստեփանը, աւարտել էր գիմնազիալում, հայրը արդիւնք նրան համարարան մտնել, մտածելով թէ ուսումը փաստակար բան է, կարող է բոլորովին փշացնել նրան: Վերադառնալով հօր տունը, որդին երկար տարիներ անգործ մնալ էր դալիս գիմնազիալի համարգետնով, և միշտ թախանձով էր, որ իրան կրկին ուղարկէ ուսումը շարունակելու: Հայրը ըստ անգամ չէր ուզում, և ստիպում էր, որ խանութը մտնէ և այնտեղ առևտուր սովորէ: Այստեղից ծագեցան հօր և որդու մէջ անհամաձայնութիւններ, որ պատճառ տուեցին անվերջ դժգոհութիւնների:

Մասիսեանի մնացած աղջիկներից երեք քոյրը կոչվում էր Գայիանէ, իսկ կրտսերը՝ Հովսիփիմէ. առաջինը տասն տարեկան էր, վերջինը՝ եօթը: Այդ երկու քոյրերի վրա ընտելւած կարծես կամեցել էր գործ գնել իր բոլոր յաւուրութիւնը, մէկին ստեղծելով որպէս գեղեցկութիւն օրինակ, իսկ միւսին՝ նոր հակառակը: Բնաւորութեան կողմից նոյնպէս նման չէին: Գայիանէն, տղիքը, չափազանց մեղմիկ և բարեկրօտ էր: Հովսիփիմէն, գեղեցիկը, նոյնքան հպարտ և չար էր: Տղիքը տգեղութիւնը լրացնում էր երկու ոտների և կաղնիքի, որի պատճառով ման դուր ժամանակ սաստիկ օրորվում էր: Մարմնով արատաւոր ներք միշտ լեղումանք, հեղուկ և երեւմէն կծու էր լինում: Գայիանէն իր բարեկրօտութեան հետ զուրկ չէր և այլ յատկութիւններից:

Երկու քոյրերի մայրը կոչվում էր Մարիամ: Շատ անգամ բախտը, ճակատագիրը, նախախնամութիւնը, — վերջապէս ինչ որ կուգէք, անուանեցէք, — բայց կայ մի բան, որ զարմանալի կատարներ էր խաղում անուանական գոգաւորութեան մէջ: Տեսնում ես, գեղեցիկ կնոջը տալիս է տղիք ամուսին, իսկ սիրուն տղամարդին տղիք կին: Տեսնում ես, խելացի կնոջը յիմար մարդ է ունենում, իսկ յիմար կնոջը՝ խելացի մարդ: Տեսնում ես, կարճահասակ տղամարդը բարձրահասակ կին է ունենում, իսկ բարձրահասակ տղամարդը՝ կարճահասակ կին: Կարծես, բախտը ամուսնութեան մէջ ներդաշնակութիւն չէ սիրում: — Այսպէս էլ պատահել էր անբախտ Մարիամի հետ: Ողբան նրա ամուսին այդ ժամա, դաժան և անտանելի էր, — ինքն այնպէս չէր, բարի և համակրական էր: Գայիա-

նէն մօր սիրան ունէր, իսկ Հովսիփիմէն փոքր ինչ նման էր հօրը: Բայց Ստեփանը ոչ մէկին նման չէր:

Սա այդ ընտանիքի մէջ ընկաւ Կաթին, այն գիւղական ուրախ և անհոգ թուշիկը, — այդ ընտանիքի հետ կապվեցաւ նրա ապագան, որ մեր վէպի գլխավոր նիւթը պէտք է լինի:

Մինչև Կաթի յայտնվելը, Մասիսեանի ընտանիքը երբեք ոչ մի ծառայ կամ ապաստար չէր ունեցել. մասնաւոր այն խաչատուակ անցքից յետոյ, որ նրա աղջիկներից մէկը փախաւ գործակատարի հետ, Մասիսեանը միշտ հեռու էր պահում իր տունը օտար տղամարդներից: Ամեն ինչ, որ պէտք էր տեսնուելու համար, ինքն էր գնում լազաւորից. շատ անգամ կարելի էր տեսնել նրան որ իր քնթիւ աղուլի մէջ միւս, կանաչի, միդգ, կամ մի ուրիշ բան դրած, տուն էր բերում: Եւ եթէ պատահում էր, խանութի աշակերտներից մէկին ձեռով ուղարկել, նա պէտք է զննի տար բերած բանը և յետ դառնար: Ներս մտնելու իրաւունք չունէր: Մասիսեանը խառնութեամբ էր բաւարար չունէր: Մասիսեանը խառնութեամբ էր պահպանում այն պայմանները, ինչ որ վերաբերում էր ընտանիքի անմատչելիութեանը, կամ կանանց սեռի հեռու պահելուն օտար տղամարդի հասարակութիւնից:

Բայց զանաք-բիշակները, այսինքն՝ անային, փոքրիկ, տղայ-սպասաւորները, ընդունված են մինչև անգամ պարսկական հարեմների մէջ: Մինչև 12—15 տարեկան հասակը այդ անմեղ արարածները ընդունվում են կանանցների մէջ: Կաթի տարիները բոլորովին համապատասխանում էին այդ վիճակին:

Առաջին օրը, — մեծ պատի աւաղ ուղբով երեկոյան, — երբ նրան տուն բերեցին, աւաղի գիւղացու օտարուն կերպարանքը բարձրացրեց ընդհանուր ծիծաղ:

— Դա է նոր բռնած ծառան, հարցրեց տիկին Մարիամը հեղանկան կերպով իր ամուսնից, ոտքից ցղուել չափելով Կաթին, որ նորն ժամում զարմացած նայում էր իր շուրջը:

— Ի՞նչպէս է, չես հաւանում, պատասխանեց նրա ամուսին այլը մի առանձին բաւականութեամբ. — տեսնում ես, օխտը մարդու բան կը բանի. դօշաղ տղայ է. դու մէկ նրա ձեռք ու ոտքին մտիկ տուր, կասես, նոր խալից դուրս բերած եղբ լինի *):

*) Ես ամից դուրս բերել նշանակում է երկրագործական լրարած և ուժից ընկած անա-

տում նորա
ինչ կարող
որոնցով ա
թիւները
այսօր 19-դ
նում, նոյնպ
պէք այդ
բերի ընթա
աւելող ոյ
են կործան
գեղեցիկ
լովում էր
Մնտարի
ճառողովի
ամեն հնու
տեղ բայց
աղիւ հայ
լոյսական
գիւղի և
մի հակէ
կուլթիւնը
թեան պա
կրեանի հ
տարուց ա
կարգը Գ
կար տար
մի չնչին
Դարաշնչ
ողբալի դ
ցնք, դու
գուսար
թեանը վ
մի քա
բարձր: Բ
չը, որպէ
իսկ ամե
եկեղեցի
թէ երկա
ձրեկց ազ
լէնք մի
պատմութ
նիւթ:

Կարգը
124 համ
անտարա
յայտնած
և օյտակ
կատարն
այլ յարգ
տալ:

Այս
պարտը
ներու ա
ձեր մար
Անք
պահել ձ
իտքերը
չէպի մ
Մենք ա
տակար
կատար
նախադ
կը յարգ
երբ բար
խոնա
տիւ Տէ
րով և
պատազ
ճնշուա
տամար
կէթէ
մենք կ
ների ա
լանակ
ինչպէս
մարց
կիւտի
ստիպու
միշտ
Եւ մ
թեան
դէս է
գիր (ո
դրած է
բուած
նուանի

ստում նորա պատմական վեճը իր տեղից, արդեօք ինչ կարող ենք պահանջել մարկանից և թուրքից որոնցով աւելի են չբացապատած հայկական հնու-
թիւնները: Գարաշիչազի հնութիւնները որոնք այսօր 19-դ. դարու ճարտարապետի աչքն է չլաց-
նում, նոյնպէս բարձր թողի արած են: Մի հայտնաբ-
բցէք այդ հրաշալի շինուածքներին և տեսէք դա-
րերի ընթացքում որպէս հետո մարտնչել են նոյնա-
աւելոյ պիւրի հետ: Ամբողջ միայն կաթողիկէն են
կործանել, իսկ միւս մասերը այնպէս նոր և
գեղեցիկ են, որ կը կարծէիք թէ դեռ երէկ
լուում էր այն տեղից հայ քահանայի աչքերէ ձայնը:
Անտարքի մնայ և սպասել մեր երեսակցած յան-
ճառողով իրագործելուն, դուք մինչև այդ օրը
ամեն հնութիւնները չքանան մեր աչքից և նոյնա-
տեղ բացի քարակոյտներից ոչինչ չը մնան: Արեւմտե-
այն հայրենակիցներ, մեր ամենիս վրա մի բա-
րոյական պարտականութիւն է ընկնում, որ ամեն
գիւղի և քաղաքի մերձ գտնվող հնութիւնների
վրա հովէին այն քաղաքի կամ գիւղի հասարա-
կութիւնը: Գարաշիչազի վանքերի վերահսկողու-
թեան պարտականութիւնը ուղղակի ընկնում է
Երևանի հայ հասարակութեան վրա: Քառասուն
տարուց աւելի է, որ Երևանի ծառայող դասա-
կարգը Գարաշիչազի հետ ծանօթ է: Եթէ այդ եր-
կար տարիների ընթացքում նա իւրաքանչիւր տարի
մի չնչին դումար դոսիւր այդ նպատակին, այսօր
Գարաշիչազի հնութիւնները չէինք տեսնի այդ
որդալի դրութեան մէջ: Վերանորոգութիւն ասա-
ցինք, դորանով մենք չենք պահանջում այն խոշոր
գումարը այդ եկեղեցիները իրենց նախկին դրու-
թեանը վերածելու, դա կը լինէր չափազանցութիւն
և մի քաղաքի հասարակութեան կարողութիւնից
բարձր: Բաւական է մի պարիսպ դնել վանքերի շուր-
ջը, որպէս զի արգելէ լինէր անտուճները մուտքը,
իսկ ամենամանրամասնորէն այն է, որ պէտք է այդ
եկեղեցիների կիսակործան տանիքը փայտեայ կամ
թէ երկաթեայ թիթեղով ծածկել ձիւնից և ան-
ձրեկից ազատելու համար, դորանով մենք կը պատ-
վէինք մեր ինկիլը հարց սուրբ յիշատակ իսկ
պատմութեան համար կը թողնէինք մի հարուստ
նիւթ:

Ա. Եր.

ՆԱԽԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս, 1 օգոստոսի

Կարգավոր ձեր պատուական լրագրի 121 և
124 համարների մէջ առաջնորդող յուշումները
անտարակոյս շատերը համակրում են նոյնանում
յայտնած աղիւս մտքերուն, անգին խրատներուն
և օգտակար առաջարկութեանց: Իսկ մենք գործա-
կատարներս պարտական ենք ոչ միայն համակրել
այլ յարգանք և ուրախութեամբ նոյնա կատարումն
տալ:

Այս առթիւ ստորագրողներս անհրաժեշտ
պարտք համարեցինք մեր սրտի շնորհակալութիւն-
ներու անկեղծ և անթիւ զգացմունքները նուիրել
ձեր մարդասիրութեան:

Մենք կաշխատենք սրտերուս մէջ միշտ անմոռաց
պահել ձեր վերոյիշեալ յուշումներու թանկագին
խօսքերը և բարի խրատները..., որը ուղղում է ք-
ղաքի մեջ յօրուս մեր ապրել և մարդկութեան:
Մենք անմիջապէս կը հետեւնք ձեր փոքր և օգ-
տակար առաջարկութիւններին և կաշխատենք
կատարելագործել ձեր ընտիր պատուէրները, որ
նախագիծ էք պայտէս. պարգեցէք ձեզ և ձեզ
կը յարգեն. ուղղեցէք ձեր կեանքի եղանակը և
ձեր բարեկամութիւնը... և այլն:

Խոնարհաբար խնդրում ենք ձեզանից, մեծապա-
տիւ Տէր, յանձնառու լինիք ձեր ազդու խրատնե-
րով և բարի խորհուրդներով շարունակաբար
պաշտպանել մեզ նման թշուառ գաղափարովն որ
ճշուտած ենք մեր պարտքերի հարստահարիչ և
տմարդի բնաւորութիւններին:

Եթէ կը ընդունէք մեր այս խնդրը այն տեսն
մենք կարող ենք ըստ աշխարհ հանել մեր պարտն-
ների անթիւ անաղիւս վարմունքները իրանց աչ-
քանակ գործերով, որոց միայն մի փոքր մասը,
ինչպէս երևում է, հաղորդած են ձեզ, իսկ մեծ
մասը մնում է բացի մեզանից առանց ուրիշ
գիտութեան, որովհետև մենք սովոր ենք հարկից
ստիպում համարի (մուշ) նման միշտ լռել և
միշտ համարել:

Եւ մինչդեռ մենք այս անմարդավայել դրու-
թեան մէջ լուռ և մուշ երբեք ենք, ահա հան-
դէս է գալի տեղական ռուսներէն լուռով մի օրա-
գիր (որոյ անունը գիտենք, իսկ որ համարումը
գրած է չենք յիշեր այստեղ) աշխատում է հա-
րաւածել մեզ անպատիւ և անարգ խօսքերով ա-
նուանելով Թիֆլիսի ընդհանուր գործակալներին

անբարոյականներ, շռայներ և ստացած ռուսիկնե-
րից քառասպատիկ և հնդկաստիկ աւելի իրանց
քէֆի համար մեխողներ և այլն, և այլն, և այլն:
Խնդրում ենք ասացէք, որ դասակարգի մարդկանց
մէջ չը կան վատ բարեկամութիւն և անբարոյական
անձինք: Եթէ որ Թիֆլիսի գործակալներին մէջ
կան վատ մի քանի անբարոյական և ապականած
բարեկամութիւն անձինք, որք, փոքր թիւ են կաղ-
մում, միթէ խղճի ընդդէմ չէ առանց բացառու-
թիւն անելու ընդհանուրիս պատիւը չօշափել, ա-
ռանց այդ էլ մեր պարտնեքը ծուռը աչք էին
նայում մեր վրա... Արեւմտե թող ներուր մեզ ասել
որ այդ գրուածքը անհեռատեսութեան և անա-
ռողջ դատողութեան արգասիք է: Աւելորդ չենք
համարի խնդրել գործակալներին ընկերութիւ-
նից առանձին ուղարկութիւն դարձնել և քննու-
թեան առեւել «Մշակի» 124 համարում գրած ձեր
առաջնորդող յուշումը, և որքան կարելի է շու-
տով սկսել իր գործունէութիւնները, որոց սկզբնա-
ւորութեան սպասում ենք յոյսով և նորա յառա-
ջադիմութեան և յաշտութեան ցանկացող և գոր-
ծակցող ենք ի սրտէ:

Թիֆլիսի գործակալները:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԻՆԵՐ

Երկուշաբթի օր, օգոստոսի 13-ին Թիֆլիսի
հայ օրորդների մի անկայտ խումբ, որ բաղկացած
էր մեծ մասամբ զանազան ռուսաւարանների ա-
շակերտներից, սուսեց Ամարային թատրոնում մի
հայ պատմական պիեսա «Այն քաղաքի աւերումն»
անուամբ: Խաղը շատ կոպիտ և խաղատաւով
բաց թատրոնը լի էր: Ներկայացումն դեռ չը
սկսված, խաղացողներից մինը դուրս եկաւ բեմը
և յայտնեց որ խաղացող օրիորդներից մէկի տեղ
կը խաղայ մի պատանի, խաղը սարսափելի էր,
դեռ երկու խօսք միմեանց ետևից կապել չլուս-
ցող աշակերտներ ամենածածուկի շարժումներով
խաղում էին թագաւորների, պալատականների և
զինուորների դերերը: Ժամանակ է արդէն խառու-
թեամբ վերաբերվել դէպի այդ տեսակ երեխայա-
կան թատրոնական ներկայացումներ, ժամանակ
է արդէն վերջ դնել այնպիսի ներկայացումներին,
որոնք այնպէս էլ անկրթ հասարակութեան ճա-
շակը աւելի փչացնում են: Բայց հասարակութիւնը
սաստիկ ծափահարում էր անհամ պիեսային և
աւելի էլ անհամ ու անշնորհ խաղին:

Ներկայ օգոստոսի 19-ին, կիրակի օր Արծ-
րունու թատրոնում թատրոնաւէրները կրկին
տալու են մի ներկայացում: Կը խաղան մի նոր
պիեսա «Գեղեցիկ Զեդինէն» որք և արդէն մի
անգամ խաղացած «Մի թաւ թէյ» և «Նոր բնա-
կարան» վոլըվիլները: Տոմարները կարելի է ստա-
նալ թատրոնի կասսայում:

Մեզ գրում են, որ քանի մի օր սրանից առաջ
Ղազարի գաւառի Կոթի-դիւղի երեք հայ մարդ
գնում են մի թուրք գիւղից հինգ վերստ հեռա-
ւորութեամբ գտնված Ղաղաղը և այնտեղ նրանցից
մինը, մի 35 տարեկան երիտասարդ, ապանկում
թուրքերի ձեռքով, որոնք հայերի վրա հրացան
արձակելու են լինում: Մի և նոյն թուրքերը նորե-
րում սպանում են մի 22 տարեկան հայ երիտա-
սարդին, տանում են նրա դիակը անտառի
խորքը և այնտեղ մանր կտորների վրա են կտրա-
տում այդ դիակը: Ապանդները գլխաւորը մի
մօլա է:

Խումբ ենք, որ օգոստոսի 13-ին, երկուշաբթի
օրը մի քանի հայ երիտասարդներ, տիկիկներ և
օրիորդներ Թիֆլիսի մի մասնաւոր տան մէջ հա-
ւաքվելով, ձեռնամուկ եղան ճշայ գրքերի թարգ-
մանական ընկերութեան կանոնադրութեան մշա-
կութեանը: Ինչպէս իմացանք, յիշեալ կանոնա-
դրութիւնը մշակելուց յետոյ, թարգմանական ըն-
կերութեան հիմնողները պիտի ներկայացնեն
իրանց մշակված պրօգրամը կառավարութեան
հաստատութեանը:

Ամեն անգամ որ Արծրունու թատրոնում ներ-
կայացում է լինում, հասարակութեան աչքին
անպատշաճ մի նոր բան է ընկնում կամ յայտա-
բարութիւններով վարդապետ, կամ նոր կամ—կա-
րասիներ, կամ մի նոր դեկորացիա: Այժմ Արծ-
րունու թատրոնը շատ հարուստ է արդէն դեկ-
որացիաներով:

Մեզ հաղորդում են ՆՈՐ—ՆԱԽԻՉԵՆԻՍԻՑ, որ
այնտեղ հասել է խորէն վարդապետ Ստեփանէ:

Հասարակութիւնը տեղեկանալով, որ արժանապա-
տիւ հայրը պէտք է նուիրատուութիւններ հաւա-
քէր էջմիածնի համար, նրան անբաւականութեամբ
է ընդունել: Հայր Ստեփանէ մի քանի քարոզներ
է կարդացել և ընդամենը 170 ռուբլ է հաւաքել:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ԻՏԱԼԻԱ

Իտալական մամուլը սաստիկ վրդովված է
նգիւտոսի իտալական գլխաւոր հիւպատոսի
վրա. վերջին ժամանակներս Հռօմում մի հե-
ռազիր ստացվեցաւ Կայրէից, որի մէջ յայ-
տնված է, թէ իտալական գաղթականներից
15,000 հոգի, պաշտպանութիւն չը գտնե-
լով իրանց կառավարութեան կողմից, դիմեցին
գերմանական ներկայացուցչին, և խնդրեցին, որ
նա բարի լինի և պաշտպանի իրանց շահերը
խնդիրի կարինէի առաջ: Այս լուրը տաս-
տան ու հինգ օր շարունակ զբաղեցնում էր
Հասարակական կարծիքը. հասարակական կուր-
ներում, արձարաններում, և ամեն տեղ, ուր ժողո-
վորը միջոց ունէր միմեանց հետ տեսնելու,
ամեն տեղ այս լուրի մասին էին վիճում:

Այս հարցը հրապարակներից անցաւ և
ազգային ժողովը, ուր պ. Միշէլ խօսելով այս
տխուր անցքի մասին, յիշեցրեց ժողովին
իտալական գլխաւոր հիւպատոսի տեղի վար-
մունքի մասին, և աւելացրեց, որ մի քանի
լրագիրներ բողոքովն իրաւամբ են պատմում, որ
իտալական գլխաւոր հիւպատոս պ. Մարտինո
կարծես խնդիրի շահերով աւելի է հետա-
քրքրվում, քան թէ այն երկրի շահերով, որին
նա պատիւ ունի այսօր ներկայացուցիչ լինե-
լու:

Պ. Միշէլի այս խօսքերին, պ. Կայրօլի
պատասխանեց, թէ այս երրորդ անգամն է,
որ պ. Մարտինո մեղադրվում է հասարակա-
կան կարծիքի առաջ, յետոյ յայտնեց, որ
կառավարութիւնն այս անգամ էլ ուրիշ ան-
գամները պէս անուշադիր չի թողնի հա-
սարակական կարծիքի բողոքները: Սրան ապա-
ցոյց կարող են համարվել կառավարութեան
այն քննութիւնները, որ նա նշանակել է պ.
Մարտինոյ վերաբերութեամբ:

Մի քանի լրագիրներ Մարտինոյն մեղա-
դրում են և այնպիսի բաներում, որոնց ճշ-
մարտութիւնը կարծես զուրկ է ամեն հաւա-
նականութենից, օրինակ նրան են մեղադր-
ում, որ գիտական հետազոտութիւնների
համար միջին Աֆրիկայ ուղարկված իտալա-
կան ճանապարհորդները Զէլլայի էմիրի կող-
մից այնքան անբաւականացուցիչ ընդունելու-
թիւն գտան: Նրանց կարծիքով թերեւս դար-
ձեալ պ. Մարտինոն է մեղաւոր, որ այդ ճա-
նապարհորդները կողոպտվեցան:

Մենք մոռացանք յիշել, որ պ. Միշէլ
ազգային ժողովում իր խօսած ճառի մէջ
խնդրեց ուղարկութիւն դարձնել, որ Նեղոսի
ափերում բնակվող եւրօպական գաղթական-
ներից ամենաբազմաթիւը իտալական զուղ-
թականութիւնն է, հետեւաբար և իտալա-
կական կառավարութիւնը աւելի էլ իրաւունք
ունի գործել և աշխատել իր այդ հեռաւոր
հայրենակիցների շահերի ու բարօրութեան
համար: Այս խօսքերից յետոյ պ. Միշէլ
խնդրեց առանձին ուղարկութիւն դարձնել
այս հարցի վրա, հետեւապէս և մի առանձին
խտուութեամբ դատել պ. Մարտինոյ անտար-
բերութիւնը:

Ազգային ժողովի նախագահը այս օրերս
հրատարակեց ընտրողական ժողովի աշխա-
տութիւնների հաշիւը և հետեւանք: Ընտ-
րողական ժողովը օրէնքի 196 ծրագիր ներ-
կայացրեց ազգային ժողովին, այդ ծրագիրնե-
րից 130-ը անմիջապէս հաստատութիւն գտան
և ընդունվեցան, մէկը բողոքովն մերժվեցաւ,

իսկ մնացեալները վիճարանութեան ենթարկ-
վեցան:

Այս օրերս Իտալիայում ծարբերիչ անու-
նով մի վարդապետ տասերեւ օրով բանտարկ-
վեցաւ, և ենթարկվեցաւ դատաստանական
ծախսերի տուժելուն: Բանտարկութեան պատ-
ճառն այն է եղել, որ նա վերաւորել է Ռուս-
լիայի և իտալացիների պատիւը. փողոցով մի
քանի զուարթ զոյգեր անցնելու ժամանակ,
երիտասարդներից մէկը ցոյց տալով ծարբու-
րիչին, ասաց «ահա մի Վրանսիացի քահա-
նայ»: Ինչպէս երեւի երիտասարդի այս անմեղ
խօսքերը սաստիկ կպան սուրբ հօր սրտին, և
նա, չը նայելով հրապարակի ահաղին բաղ-
մութեանը, որ ժողովվել էր երաժշտութիւն
լսելու, «Cochons, canailles, sanguinaires d'Italiens»
հայհոյանքներով յարձակվեցաւ կատարու-
թեամբ երիտասարդներից մէկի վրա, բռնեց
նրա օձիքից, և այդ կռիւը թերեւ և շատ
վատ հետեւանքների կը հասնէր, եթէ մի քանի
քաղաքապաշտ գլխուորներ օգնութեան չը
հասնէին և չը բաժանէին կատարած կռուող-
ներին: Այնպէս չէ, ընթերցող, որ շատ հե-
տաքրքիր է տեսնել այս դրութեան մէջ այն
վարդապետութեան ներկայացուցչին, որ քա-
րոզում է երկարամիտ, հեղ, համբերող և
ներողամիտ լինել, որ քարոզում է.—եթէ
մէկը քո աջ երեսին ապտակ խփէ, դարձու-
նրան և միւսը—մեզ շատ հաճելի է տեսնել
այդ հացկատակ դերասաններին թատրոնից
դուրս իրանց բնական դերի մէջ:

Այս օրերս վերջին թշուառութեան մէջ
մեռաւ Դարիւրալիի տան վերակացու քահա-
նայ Յրա-Պանտալէօ:

Այդ մեծ քաղաքացու կեանքը այնպէս հե-
տաքրքիր, և այնպիսի օրինակելի է, որ մենք
չենք կարող զսլիւ մեր ջերմ ցանկութիւնը
փոքր ինչ աւելի մանրամասնաբար խօսելու
նրա մասին «Մշակի» հետեւալ համարում:

ԻՍԱՆ ԼՈՒՐԻՆԵՐ

Այս օրերս հասաւ Թիֆլիս մի ռուս գիտնա-
կան պ. Յ. Պօրեակով, որ նպատակ ունի հետա-
զօտել Կովկասի հնութիւնները: Պարնը Սիբիրիա-
յից է և Ս. Պետերբուրգի Կայսերական Ակադե-
միայի զօշօցիական թանգարանի կառավարիչ է:

Օգոստոսի 3-ին գերմանական Հայդլերից քա-
ղաքը և համալսարանը շքեղ կերպով տօնեցին
Բլուենտշլի պրօֆէսորի համալսարանական դա-
սատուութեան յիսուն ամեայ տարեդարձը: Հինգ
օր շարունակ Հայդլերից տօնակատութեան մէջ
էր: Բլուենտշլի յայտնի է, ինչպէս իրաւաբան և քա-
ղաքական գիտութիւնների պրօֆէսոր: Բլուենտշլի
գերմանական Շվէյցարիայումն է ցնվել և 1836
թւին Ցիւրիխի կանոնի խնդրով կազմեց իր
հայրենիքի համար քաղաքական օրէնքների ժո-
ղովածու, որոնք մինչև այսօր գործադրվում են
Շվէյցարիայում: Արդէն օգոստոսի 1-ին տօնը
գործնով սկսվեցաւ, որ երբ պ. Բլուենտշլի մտա-
համարանական դահլիճը, որտեղ իր սովորա-
կան դասախօսութիւն պէտք է անէր, նա գտաւ
այդ դահլիճը զարդարված ծաղիկներով: Օգոստոսի
3-ին ուսանողները թւով 700 հոգի ջահահանդէս
արեցին իրանց յարգված պրօֆէսորին: Իր յօբէ-
լեանի օրը Բլուենտշլի ստացաւ շնորհաւորութիւն-
ներ ամեն կողմից և նոյնպէս մի քանի օտար տե-
րութիւններից շնորհաւորութիւններ և պատուա-
նշաններ եւ ընդունեց:

Խումբ ենք, որ կիրակի օր Արծրունու թատ-
րոնում հայոց ներկայացման ժամանակ հայ թատ-
րոնաւէրների խմբին կը մասնակցի մի վրացի
օրիորդ, որ հայերէն է լեզուով կը խաղայ
«Նոր բնակարան» պիեսայի մէջ:

Խմբագիր—հրատարակիչ Գ.Ի.Գ.ՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

1030 ՏԵՍԱԿ «ՓՈՐՁ» ԱՄՍԱԳՐԻ

ԼՅՈՒԹԵՐՈՐԿ Ե ՈՒԹԵՐՈՐԿ (յՈՒՄԻՍԻ Ե ՕԳՈՍՏՈՍԻ) ՀԱՄԱՐՆԵՐԸ:

1. Քոլանդարներ թիւն.— 1. Հայր խնդիր, ազգային վիպասանութիւն Պերճ Պաշտանցի:
2. Կառնապանգիր Մ. Գոշի, իրաւաբանական հետազոտութիւն Վաչան վ. Բասալմանցի:
3. Բնաւորութիւնների ժառանգականութիւն, Ս. Ապասանեան: 4. Կանխ ընկալ Տիգրէլ, զորճ Գ. Պաւլի:
5. Վեճառար Մշեցու նոր սերունդ, վանեցոյ շտանազը, քանասոց ճորճ Գ. Պաւլի:
6. Տրդարական գրասարանների, ճառ Լ. Մարտիրոսի:
7. Բաժնի նախագը, զորճ Օսկար Յէլեյրերի: Ազգային տեսութիւն.— 8. Օսմանեան ինքնակալութիւն և Ռուսացը, Մերնից:— 9. Տեղեկագիր Վարդապետար—Արեւիկան ընկերութեան: Ազգական կանոնը Կարոյ Ս. Լ. զրարանի: Հիմնական կանոնների Սիլիս ընկերութեան: 10. Յուշակ նուիրաւորութեան Ռուբինեան—երկրագործական ուսումնարանի: 11. Նամակների խմբագրին: Քաղաքական տեսութիւն.— 12. Իշխան Լուի Նապոլեոնի մահը.— 13. Հայի յուշիկ 6-ի ինկալացման յօդու Տանգուցեալ Ամբիկիանցի ընտանիքի: 14. Գաղղիկներ—Հայերեն—Տաճիկերէն բառգիրք, Նորայրի: 15. Ազգ: Ցաւ եւ յուշ և ճ.— 16. Խաչաքար, փոփոխ Գ. Ստեղծութիւնների: 17. Յայարարութիւնների:

Ստորագրում է կարելի է թվիջիտում «Փորձ» խմբագրատանը և Կենտրոնական գրական-
ականություն: Օտար քաղաքային կարող են գլխին խմբագրին հետևել հասցեով.— Тифлисъ.
Въ Редакцію Армянскаго журнала „Пордзъ“

Խմբագիր-Հրատարակիչ ԱՐԳԱՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳԻՄԱԿԱՃԱՌԱՆՈՅՈՒՄ

վաճառվում են, 'ի միջի այլոց, հետևեալ հայերէն գրքերը.

	Ք.	Կ.
վաճառվում են, ի միջի պայտց, հեռահալ հայերէն գրքերը .	—	40
Օր. Տէր-Մարկոսեանց՝ Թ ա ր մ ա մ ա զ Մ ե ղ ու լ, պատկերազ-	1	—
ԲԺ. Տիգրանեան՝ Մ ա ր մ ա ն կ ա ղ մ ա կ ա ն բ առ ա ր ա ն .	1	—
ԲԺ. Բարսեյան՝ Ուսոսեմն արանի առողջ. հարցեր	1	25
Սրուանձտեան՝ Թորոս Աղբարմա .	1	75.
— Մ ա ն ա ն ա յ .	—	50
— Շ ու շ ա ն Շ աւարշանայ .	1	25
Խրիմեան՝ Հրաւիրակ Արարատեան .	1	45
— Ս իրաք Ասմուէլ .	—	70
— Յիսուսի վերջին շաբաթը .	—	75
— Մարգարիտ Արայոսեթեան .	1	25
— Դրախտի ընտանիք .	—	20
— Վ ա ղ ո ղ ժ .	2	75
Պէշէթթաշեան՝ Մատենադրութիւնք .	—	75
Աստանեան՝ Մէթողին վերայ .	1	75
Դուրեան՝ Տաղքէթատերերգութիւնք .	1	20
Ալթունեան՝ Տեղիկ. Հայոց գաղթականութեան	1	—
Մերեց՝ Թորոս Լեւոնի .	—	75
Շալլաճեան՝ Նոր երգարան .	1	—
Չեքաղ՝ Գրական փորձեր .	1	—
— Աղգային դաստիարակութիւն .	—	60
— Հայաստան և Խոտլիա երկ. տիպ	—	40
Թէ ի՛նչ շահեգանք երբ. վիճած.		

Ներանձնան հրապարակի վրա ԹԱՄՍԱՄԵՏԵՎԻ կարգավանարայի գէճուղւմը № 11. տան վերի յարկում վարձով տրվում է մէկ ԳԱՀԼԷՆ ծառայով, լաւ կարասիքով և առաւօտեօրէնի սամովարով. դահլիճը մի բալիօն ունի իր առաջ: Գինն է ամսական 40 ռուբլ: Բայի դահլիճը մի և նոյն տանը վարձով տրվում են նոյնպէս առանձին ՍԱՆՏԱԿՆԵՐ կարասիքով ծառայով, սամովարով և լուսաւորութենով. այդ սենեակները ամսական արժեն 25, 21) և 15 ռուբլ: Այդ սենեակներում կարելի է նոյնպէս ընկերով բնակվել: Հարցնել մի և նոյն տան դրան առաջ միթո՞ւ ծախող ՅԱԿՈՎԻՒՆ:

Յունիսի 17-ին Արժեքազու թատրոնում բարե , գործական նպատակով տառ ներկայացումից գոյացաւ 294 ռ. գումար. տոմսակներ ծախկցաւ 226 ռ. 70 կ., իսկ ընդհանուր գումարի մնացած մասը, այսինքն 67 ռ. 30 կ., զուտազուտ անհերք հոսքը բախկին է կազմում: Դպիտանի բոլոր գումար կազմում է 139 ռ. զուտ գումար մնում է 55 ռ., որը յանձնվեցաւ պ. փութինեանցին հասցնելու ըստ պատկանելոյն: Մեր սրբազան պարտադրութիւնն ենք համարում՝ մեր անկեղծ շնորհակալութիւնը յայտնել այն անձանց, որոնք լրանցեալութեան տարածումին մեր ներկայացումին:

«**ՄԱՆԿԱԿ ԱՐԺԱԿԱՆ ԹԵՐԹ**» ԱՄՍԱԳՐԻ

10 *df w q p n l [θ h l h g*

«Մանկավարժական Թերթը» իւր երկրորդ տարուայ շրջանում հրատարակվելու է նյութալուծեամբ և ծրագրով, ինչպէս որ առաջին շրջանում՝ հետեւեալ պայմաններով:

1. Տարեկան կը լինի 10 զբոյկ, իւրաքանչիւրը 6 թերթիկ (96 էրես):

2. Տարեկան գինն է ամենայն տեղ 6 ռ.:
3. Մինչև սկսած մեծերի 10-ն բաժանորդ

դազմերը վճարող բաժանորդը կը ստանայ ձրի
թուղթ ամսի վերջին մի քանի րդ հեղինակու-
թիւն հայերէն լեզուով թարգմանութեամբ
կամ ինքնուրոյն՝ քննութեան ժամանակ համար

4. Եթէ բաժանորդաց թիւը Հասնի մինչև 480-ի, այն ժամանակ լաւագոյն թիւնա իւր բաժանորդներին ճրի տալու է երկու գիրք

5. Ուսուցիչները կարող են բաժանորդագրվել դիմարկի երկու տուազ. առաջին երեք րոպեյին յուրաքանչյուրի սկզբին, միւս երեք րոպեյին տեղումբերի միջև. 6-ին՝ Վերջին տուազի բաժանորդագրներ ուշանալիս «Երբեք» չի ուղարկվի տղաների գրքոյից սկսած մինչև դրամատիկա:

6. Որ և իցէ, զբքոյլի չը ստանալու մասին
բողոք հարկաւոր է ուղարկել ուղղակի խմբա-
րոյութեանս հետեւեալ Նոյն ստանալուն պէս

Բաժանորդը գրելիլ յանկացողները կարող են
գլխել խմբագրութեանս գրասենեակը, ո
գտնուիւմ է պ. Յ. Մարտիրոսեանի տպարանու
Սրբէկեան փողոցի վերայ, Ալէքսանդրեան պար
տէզի մօտ:

Օտարաբարդարացիք կարող են դիմել Հե-
տևյալ հասցեով. Вѣ контору Редакціи
Армянскаго Журнала „Педагогическі
Листокъ“.

Խմբագիր ՅԱԿՈԲ ՏԷՐ-ՅՈՎ, ՀԱՆՆԻՍԵԱՆ:

Սուրբ Գայրանեան Հայ Օրիորդաց Միջա-
կարգ Ուսումնարանը բացվում է օգոստոսի
14-ին և այդ օրից սկսած լինելու է նոր
աշակերտուհեաց ընդունելութիւնը:

Ուսումնարանը բաց է ամենայն օր՝ բացի
կիրակի, և տօն օրերից, առաւօտեան ժամը
8-ից մինչև 12-ը:

Պաշտօնակատար տեսչի՝ Ն. Խոսրովեանից:

Պատիւ ունիմ՝ յայտնելու Հայ Հասարակութեանը, որ Ներսիսեան Հայոց Ազգային Հոգեւոր Կրթանոցի մէջ աշակերտաց ընդունելութիւնը սկսած է օգոստոսի 20-ից և շարունակվում է մինչև սեպտեմբերի 1-ը:

Դպրանոցը բաց է ամենայն օր, բացի կիրակի և տոն օրերից, առաւօտեան ժամը 8-ից մինչև 12-ը:

Պաշտօնակատար անսչի՝ Ա. Նաչատրյանը:

Ի. Ա. ՍՆԼԻԲ-ԲԷԳԼԱՐԵԱՆԻ մասնաճյուղի
բնակիչ անդամները արձանագրված
գրանցամատյանները կրթական կրթական օգոս-
տոսի 20-ից, իսկ ուսումը կրթական և պ-
տեմբերի 1-ից: Ուսումնարանը գտնվում
Սաբոթայի փողոցի վրա, Տուստումյան
տանը (Խաչատրյան հարկային) № 34:

1-3

Սեպտեմբերի 1-ից բացվում է ՄԻ ՌՈՍՈՒՆԻ
ԵԱԲԱՆ, որ երկու ԳԱՍՏՏՈՒՆՆԵՐ՝ Կոնսեյա
կա ի Կ Ե Ռ Երեխաների Համար: Ուսումնա
րանի նպատակն է պատրաստել երեխաների
գնահատան ուսումնաբարանների առաջին և երկ
րորդ դասարանները մանկու Համար: Ուս
անողները բաժանվում են երեք կարգի
երեխաներ, կիսագլխերթիկներ և գլխերթ
իկներ: Նրթիկները, որոնք մինչև 2 տան
են մնում ամսական 6 րուրդ են վճարում
Յանկացողները օգուտ չաղել ծաշից յետ
եղած Ժամի 4—7 պարապմունքներով առե
լացվում են 5 ր.: Կիսագլխերթիկները, որոն
առաւօտուն 6 Ժամից մնում են մինչև
Ժամը երեկոյան և կոնսեյան նախաճաշը
և ծաշ պետք է ամսական 25 րուրդ վճարեն
Գլխերթիկները ամսական 40 ր. են վճա
րում: Յանկացողները պետք է գլխեն Կօմ
սուլակայի փողոց Տէր-Առկատողների տուն
№ 6. Է. Ժ. Բոյազօմ-Սարգսյան:

2-6

ՕԳՈՍՏՈՍԻ 16

Տ Ե Ղ Ե Կ Ա Ց Ո Ց Ց

ԹԻՖԼԻՍ 1879

ԹԻՖԼԻՍԻ ՎԱՃԱՌԱՆՈՑ (Օգոստոսի 15-ին)	Ր.	Կ.	ՀՆՈՒՊԳԻՐ	ՓՕԹԻ-ԹԻՖԼԻՍԵԱՆ ԵՐԿԱՌՈՂԻ	Փ Օ Ս Տ	ԲԺՇԿԱԼՈՑ	ՎՄՇԱԿԻՆ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ
Ոսկին (պոլեմիսերիալը)	7	98		Թիֆլիսից մինչև փոթի (ճանապարհորդների գնացքը) 9 ժամին 21 րոպէ առաւօտեան: Մինչև Միխայիլով (խուռն գնացքը) երեկոյեան 5 ժամ 18 րոպէ:	Ամեն տեսակ թէ նամակներ, թէ քաղաքներ և թէ ծանր փոստ ամեն տեղ ուղարկելու, ընդունում են ամեն օր, առաւօտեան 8 ժամից մինչև 1 և կէսօրից յետոյ 3 ժամից մինչև 7: Իսկ կիրակի օրերը հասարակ նամակներ մինչև 10 ժամ առաւօտեան և 3—7 երեկոյեան:	Հիւանդների ընդունելութիւնը առաւօտեան 8-ից մինչև 10 ժամը:	—
Հին 84 պր. մ. արծ. 1000 մ.	1480	—				Երկու չաքթի. լիւսիցեղ և Գօրայիլիչ ներքին հիւանդութիւններ:	— Թիֆլիս. Թ. Ձեր յօդուածը
Հին 20 կ. 72 պր. 1000 »	1240	—					Թիֆլիսի ծխական դպրոցների մասին հետաքրքիր չէ:
Վերջինից 5% առաւօտեան	238	—					— Թիֆլիս. Կ. Դուք առաւ
Երկրորդ 5% վերջինից »	237	—					Զարկում էք, որ մենք մի հրդեհաշէջ ընկերութիւն կազմենք: Ենթահալալ ենք, առանց այդ էլ շատ գործ ունենք: Ի՞նչ կը լինի, որ այդ մի գործն էլ դուք կատարէք:
Մարտիկ կուրսը 269—	100	—					— Մ. ՎԱՐՈՒՄԻՍԱՍ. Ա. Ղ.
Լճագետի կուրսը Օդեսայի վրա	9	40					Ձեր պատասխանը չենք կաս
Վենացի կուրսը արծէ 121 դր.	100	—					Ընդ տակը որովհետև ձեր ուսուցիչն ձեռագիրը անկախ լինի է կարգալ: Պատասխանը երկու մարդկերանց յանձնեցինք թարգմանելու, բայց ոչ մէկը նրանցից չը կարողացաւ ձեր ձեռագիրը կարգալ:
Դաւրեթի բարաթը	4	80					— ՄԵՂՐԻ. Խ. Մ. Մ. Ձեր յօդուածը պէտք է բաւական փոփոխվի: Շուտ չենք տակ:
Առեւտրական բանկի ակցիան 200 մ.	310	—					Օ Բ Ե Լ Ս, ատամիչ, ընդունում է իր տանը ամեն ժամանակ խնդի հիւանդներին Բժշկանոցի տնայնակով:
Փոթի թիֆլիսեան երկաթուղու ակցիան 125 մ.	—	—					
Շաքարը բրոնզի	7	05					
» միւս տեսակը	6	95					
» չաքար աւաղը	5	60					
» տրամպորտ	5	10					
» մաքուր վիճակում	10	—					
Բամբակը երեսուն Ամերիկայի սերմից	8	—					
Միւս տեսակը հին սերմից	7	40					
Բուրդը թուրքի	7	50					
» թարաքամի	4	—					
ԱՆԻԼԻՆ Զորագալու	2	20					
» երեսին	—	—					
Գարին	1	40					
Մոմը բնաճարակ (свеч.)	12	40					
Մետաքսը Նուրմիայ	180	—					
Կանաթ ունը	100	—					
Կոկոնը Նուրմիայ (բոժ)	50	—					
Ֆրիզոնը (լաւ) Ագուլիայ	60	—					
Կօֆէն մօկօի	26	—					
» լիւսին	22	—					
» Մանտինյուն	18	—					